ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան 1-ի մաս, կենտ.փ շ.1, Հեռ.
(098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 29
25 փետրվար 2015թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2015թ. փետրվարի 24-ի թիվ 3, 4-Ն և 5-Ն որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 3

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12 հոդվածով.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2015թ.փետրվարի 24-ի նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 4-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով , 69 հոդվածով, <<Բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

1. Հաստատել Թումանյան համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
5. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2015 թ. փետրվարի 24-ի թիվ 4 - Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2014թ–ի տարեկան բյուջեն կատարվել է եկամուտների գծով 100,6 %-ով, նախատեսված 31555,5 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 31732,8 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 3693,3 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 3870,8 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 104,8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 27665,4 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 27665,2 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը 100,0%: Պետական բյուջեից համայնքի վարչական մասին տրամադրվող նպատակային հատկացումները նախատեսված էր 196,8 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2014թ-ի բյուջեի վարչական մասով նախատեսված էր 31555,5 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 31732,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,6 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 3693,3 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 3870,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 104,8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 27665,4 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%: Պետական բյուջեից համայնքի վարչական մասին տրամադրվող նպատակային հատկացումները նախատեսված էր 196,8 հազ. դրամ, որը տրվել է ամբողջությամբ:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2014 թ-ի բյուջեն նախատեսված էր 914,7 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 914,7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,0 %: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 298,3 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 306,8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 102,8 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 1890,3 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 2067,1 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 109,4 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները տարվա ընթացքում նախատեսված էր 371,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 408,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100,1%, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2014թ-ի բյուջեն նախատեսված էր 182,0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 173,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 95,3 % :

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 27862,2 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները

1) Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված են բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներից 451,1 հազ. դրամ, որից տրվել է 451,0 հազ. դրամ ,կատարման տոկոսը՝ 100,0 % :

2) Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները առաջացել են նաև ոչ ֆինանսական ակտիվ – ների իրացումից մուտքերի հաշվին ,այն է անշարժ գույքի իրացումից մուտքերը 118,2 հազ. դրամի փոխարեն՝ 156,2 հազ. դրամ ,հողի իրացումից մուտքեր՝107,1 հազ. դրամ:

3. Բյուջեի վարչական մասի ծախսերի կատարողականը

Բյուջեի վարչական մասի 2014թ.-ի բյուջեի ծախսերը տարվա ընթացքում նախատեսված էր 31555,5 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 31240,2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99,0%:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2014 թ.-ի ընթացքում բյուջեով նախատեսված 16373,1 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 16058,3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 98,1 %:

բ) Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը՝այդ թվում զբոսաշրջության համար ծախսերը նախատեսված էր 173,3 հազ. դրամ,փաստացի ծախս է կատարվել 173,3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 %:

գ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 2920,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 2920,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100,0 % :

դ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը նախատեսված 700,0.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 699,6 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99,9 %:

ե) Այլ մշակութային կազմակերպությունների համար նախատեսված էր 45,0 հազ. դրամ ծախս, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0 % :

զ) Կրթության համար նախատեսված ծախսերը 10093,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 10093,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 100,0 %, այդ թվում՝ նախա-դպրոցական կրթություն՝ 6000,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 6000,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %,արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված է 4370,0 հազ. դրամ, որի համար փաստացի ծախսը կատարվել է 4370,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100,0 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայու-թյունների գծով ծախսերը նախատեսված էր 440,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 440.0 հազ. դրամ, կատարման տակոսը՝ 100,0 % :

է) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 800.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 800.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 %:

2).Ըստ տնտեսագիտական դասակարգման 2014 թ.-ի բյուջեի վարչական մասով նախատեսված ծախսերը կատարվել են՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 12741,2 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս՝ 12741,2 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100,0 %:

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 4601,9 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 4323,4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 93,9 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 12746,3 հազ. դրամ,փաստացի կատարվել է 12746,3 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0 %:

դ) Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով ծախսերը նախատեսված էր 800.0 հազ. դրամ,փաստացի ծախս կատարվել է 800, 0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0%:

ե) Այլ ծախսերը նախատեսված էր 666,1 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 629,3 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 94,5 %:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2014թ.-ի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 1509,7 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել է 1509,6 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0 %:

1) Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը , որից՝ ճանապարհային տրանսպորտի գծով (կապիտալ նորոգում) նախատեսված էր 649,7 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել է 649,6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝100,0 %:

2) Փողոցների լուսավորության համար նախատեսված էր 610,0 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմում է 610.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝100,0 %:

5. Համայնքի բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը)

Համայնքի բյուջեի բյուջերի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 833,3 հազ. դրամ, վարչական մասում՝ փաստացի կազմում է 833.2 հազ. դրամ,որը ուղղված է բյուջեի ֆոնդային մասին, ֆոնդային մասում՝ 0.1 հազ. դրամ:

Թումանյան համայնքի 2014թ.-ի բյուջեի կատարման բարձր ցուցանիշը պայմանավորված է համայնքի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատակազմի բարեխիղճ և հետևողական աշխատանքով:

Թումանյան համայնքի ղեկավար՝ /Լ. Զավարյան/

Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ - հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 5 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով , <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14^3 հոդվածով ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության նախարարի տեղակալի 29.12.2014թ. թիվ 04/11.2/6827-14 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող /գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր՝ 0.30194 հա/ գյուղատնտեսական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման նպատակով բնակավայրերի հողերի նշանակության փոխադրելու առաջարկությունը:

2.Համայնքի ղեկավարին առաջարկել՝ սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում , ՀՀ 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1590-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում փաստաթղթերը տրամադրել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը:

Կողմ -5 Դեմ -0 Զեռնպահ -0

1. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
5. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ